

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/12Ե-3**

ք. Երևան

08 օգոստոսի 2019թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Մ.Բաղդասարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Գևորգյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնքի 2,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝

ա) երրորդ չափաբաժնի մասով 2019թ. համար պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90 օր, բայց ոչ ուշ քան 2019թ. դեկտեմբերի 10-ը, իսկ 2020թ.-ին իրականացվելիք աշխատանքների համար՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 90 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուին Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքստոլ փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուին պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուին չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուին ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուին չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուին էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուին չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 318 600 000 (երեք հարյուր տասնութ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 53 100 000 (հիսուներկու միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է

Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, իսկ 2019 թվականին իրականացվելիք աշխատանքների գինը կազմում է 135 999 987 (մեկ հարյուր երեսունհինգ միլիոն ինը հարյուր ինսուսինը հազար ինը հարյուր ութսույոթ) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: Իսկ երրորդ չափաբաժնի մասով 2020թ. համար վճարումը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կողմերի միջև կնքվի լրացուցիչ համաձայնագիր:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառու ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, սպա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, սպա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 28 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823


/տնօրագրություն/
Կ.Տ



ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Գավառի ՃՇՇ>> ԲԲԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ,
ք. Գավառ, Նալբանդյան 108
<<Հայրիզնեսրանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150000216890100
ՀՎՀՀ 08402186

/տնօրագրություն/
Կ.Տ



ՉԱՓԱԲԱԺԻՆ 3

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնքի 2,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների (Ընդհանուր)

/ՀՀ հազ. դրամ/

| NN | Աշխատանքների անվանումը | Չափ. միավ. | Ծավալը | Միավորի արժեքը* | Ընդհանուր արժեքը |
|-------------------------------|--|----------------|----------|-----------------|------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| I Հողային աշխատանքներ | | | | | |
| 1 | Հողային պաստառի քանդում (10ելV կարգի բնահող) էքսկ. 0.65մ ³ շ.փ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 3 կմ | մ ³ | 4634.37 | 1.943 | 9 004.581 |
| 2 | Նույնը ձեռքի աշխատանքով | մ ³ | 75.63 | 6.787 | 513.301 |
| 3 | 10ելV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ, բարձում էքսկ. 0.65մ ³ շ.փ. ա/ի տեղափոխում լցակույտ 3 կմ | մ ³ | 1433 | 1.964 | 2 814.412 |
| 4 | 10ելV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ լիցք, հարթում, ջրում, խտացում | մ ³ | 76.03 | 0.990 | 75.270 |
| 5 | Ե/բ (1x3)x0.18 սալերի ապամոնտաժում, հանձնում սեփականատիրոջը | մ ³ | 4.32 | 8.320 | 35.942 |
| II Երթուղային մաս | | | | | |
| 1 | Ավազակոպճային շերտի տեղադրում h=10 սմ | մ ² | 12608.84 | 0.572 | 7 212.256 |
| 2 | Խճային հիմքի տեղադրում h=16 սմ բիտումի 4.12դ/1000մ ² փարածումով | մ ² | 12608.84 | 3.635 | 45 833.133 |
| 3 | Փոսային նորոգում h=3 - 5 սմ | մ ² | 65 | 5.200 | 338.000 |
| 4 | Փոսային նորոգում հիմքով Խճային հիմքի տեղադրում h=8-16 սմ բիտումի 4.12դ/1000մ ² փարածումով | մ ² | 610 | 4.086 | 2 492.460 |
| 5 | Հարթեցնող շերտ h _{միջ} =3սմ մանրահատիկ ա/բ | դ | 38.1 | 46.360 | 1 766.316 |
| 6 | Մանրահատիկ ա/բ h=5 սմ | մ ² | 15313.7 | 5.621 | 86 078.308 |
| 7 | Արհեստական անհարթություններ (մանրահատիկ ա/բ) h _{միջ} =7սմ | մ ² | 115.264 | 6.057 | 698.154 |
| III Իջատեղեր և մուտքեր | | | | | |
| 1 | Հողային պաստառի քանդում բուլդոզերով տեղափոխում մինչև 10մ, բարձում էքս. 0.65մ ³ շ.փ. ա/ի և տեղափոխում լցակույտ 3կմ | մ ³ | 230.48 | 1.875 | 432.150 |
| 2 | Նույնը ձեռքի աշխատանքով | մ ³ | 25.6 | 6.787 | 173.747 |
| 3 | Հողային պաստառի հարթեցում բուլդոզերով | մ ² | 1600.53 | 0.020 | 32.011 |

| | | | | | |
|----|--|------|---------|---------|------------|
| 4 | Խճավազային հիմք h=12 սմ C-5 100սՔ համար - խիճ 40-70 - 1.56սՔ - խիճ 20-40 - 5.46սՔ - խիճ 10-20 - 3.12սՔ - խիճ 5-10 - 1.56սՔ - խիճ 0-5 - 3.9սՔ - ջուր - 1.1սՔ | սՔ | 1600.53 | 1.263 | 2 021.469 |
| 5 | Մանրահատիկ ա/բ h=4 սմ | սՔ | 1600.53 | 4.513 | 7 223.192 |
| | IV Վաքեր 50x60 սմ | | | | |
| 1 | Ավազակոպճային շերտ h=10սմ (վաքերի տակ) | սՔ | 95.52 | 5.970 | 570.254 |
| 2 | 50x60սմ վաքերի ջրամեկուսացում | սՔ | 1671.6 | 1.210 | 2 022.636 |
| 3 | 50x60սմ վաքերի տեղադրում (սալերով - 1194 հատ) | սՔ | 173.13 | 276.675 | 47 900.743 |
| | V Վաքեր 30x34 սմ | | | | |
| 1 | Բետ. 30x34սմ վաքերի քանդում, հանձնում սեփականատիրոջը | սՔ | 7.92 | 24.840 | 196.733 |
| 2 | Բետ. 30x34սմ վաքերի քանդում, բարձում էքսկ. 0.65սՔ շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 3 կմ | սՔ | 71.28 | 2.030 | 144.698 |
| 3 | 10eIV կարգի բնահողի մշակում ձեռքի աշխատանքով, տեղում կուտակումով՝ հետլիցքի համար | սՔ | 1.25 | 5.000 | 6.250 |
| 4 | Ավազակոպճային շերտ h=10սմ (վաքերի տակ) | սՔ | 1.05 | 5.970 | 6.269 |
| 5 | 30x34սմ վաքերի ջրամեկուսացում | սՔ | 26.46 | 1.210 | 32.017 |
| 6 | 30x34սմ վաքերի տեղադրում | սՔ | 1.68 | 261.650 | 439.572 |
| 7 | Հետլիցք ձեռքով | սՔ | 1.25 | 1.730 | 2.163 |
| | VI Մետ. d=0.273սմ և d=0.219սմ խողովակների տեղադրում | | | | |
| 1 | Մետ. d=0.219սմ խողովակի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը | զծմ | 34.5 | 0.986 | 34.017 |
| 2 | Մետ. d=0.273սմ խողովակի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը | զծմ | 33.1 | 1.130 | 37.403 |
| 3 | Մետ. d=0.325սմ խողովակի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը | զծմ | 11.5 | 1.312 | 15.088 |
| 4 | Մետ. d=0.630սմ խողովակի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը | զծմ | 13.5 | 2.683 | 36.221 |
| 5 | Այց d=320սմ խողովակի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը | զծ.մ | 220 | 0.671 | 147.620 |
| 6 | 10eIV կարգի բնահողի մշակում էքսկավատորով 0.65 սՔ կողքի կուտակում հետլիցքի համար | սՔ | 27 | 0.740 | 19.980 |
| 7 | Նույնը ձեռքի աշխատանքով | սՔ | 3.06 | 5.000 | 15.300 |
| 8 | Ավազակոպճային շերտ h=10սմ (մետ. d=0.273սմ խող.) | սՔ | 12.502 | 5.970 | 74.637 |
| 9 | Ավազակոպճային շերտ h=10սմ (մետ. d=0.219սմ խող.) | սՔ | 0.15 | 5.970 | 0.896 |
| 10 | Մետ. d=0.273սմ խողովակների տեղադրում | զծմ | 349.6 | 24.810 | 8 673.576 |
| 11 | Մետ. d=0.219սմ խողովակի երկարացում | զծմ | 5 | 19.920 | 99.600 |
| 12 | Մետ. d=0.273սմ խողովակների ջրամեկուսացում | զծմ | 332 | 1.510 | 501.320 |
| 13 | Մետ. d=0.219սմ խողովակի ջրամեկուսացում | զծմ | 5 | 1.210 | 6.050 |
| 14 | Միացման միաձույլ բետոն B-20 (վաքի և խողովակի) | սՔ | 0.88 | 112.900 | 99.352 |
| 15 | Հետլիցք ձեռքով | սՔ | 30.06 | 1.713 | 51.493 |
| | VII Մետ. խողովակներ d=0.530 սմ | | | | |

| | | | | | |
|---------------------------|---|----------------|--------|---------|------------|
| 1 | Ե/բ սալերի ապամոնտաժում, բարձում տեղափոխում լցակույտ 3կմ | մ ³ | 1.73 | 20.870 | 36.105 |
| 2 | Հենարանների կազմատում հետահար մուրճով, բարձում էքսկ. 0.65մ ³ շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 3 կմ | մ ³ | 2.624 | 28.810 | 75.597 |
| 3 | 10eIV կարգի բնահողի մշակում էքսկավատորով կողքի կուտակումով | մ ³ | 4.3 | 0.740 | 3.182 |
| 4 | 10eIV կարգի բնահողի մշակում էքսկավատորով բարձում էքսկ. 0.65մ ³ շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 3 կմ | մ ³ | 0.72 | 1.400 | 1.008 |
| 5 | Նույնը ձեռքի աշխատանքով, տեղում կուտակումով՝ հետլիցքի համար | մ ³ | 1.64 | 5.000 | 8.200 |
| 6 | Ավազակույճային հիմքի տեղադրում h=10սմ | մ ³ | 1.17 | 5.970 | 6.985 |
| 7 | Մետաղական խողովակի d=0.530մ d=7մ տեղադրում | զժմ | 18 | 100.800 | 1 814.400 |
| 8 | Գլխամասերի կառուցում միաձույլ բետոնից B20 հիմք - մուտքում (1.5x1.33x0.3) հիմք - էլքում (1.5x1.33x0.3) իրան - մուտքում (1.5x1.0x0.3) իրան - էլքում (1.5x1.7x0.3) | մ ³ | 3.252 | 112.900 | 367.151 |
| 9 | Ավազակույճ h=10սմ | մ ³ | 0.018 | 5.970 | 0.107 |
| 10 | Խողովակի ջրամեկուսացում | զմ | 17.4 | 2.930 | 50.982 |
| 11 | Գլխամասերի ջրամեկուսացում | մ ³ | 20.33 | 1.210 | 24.599 |
| 12 | Հետադարձ լիցք ձեռքով | մ ³ | 5.94 | 1.713 | 10.175 |
| VIII Ջրընդունիչներ | | | | | |
| 1 | 10eIV կարգի բնահողի քանդում էքս.0.65մ ³ շ.տ. խրամուղու կառուցում կողքի կուտակումով | մ ³ | 151.26 | 0.740 | 111.932 |
| 2 | Նույնը ձեռքի աշխատանքով | մ ³ | 16.7 | 5.000 | 83.500 |
| 3 | Ավազակույճային շերտ h=10սմ | մ ³ | 20.77 | 5.970 | 123.997 |
| 4 | Միաձույլ ե/բ ջրընդունիչ վաք բետոն B-20 ամրան Ո 14մմ A500c - 2.21 տ: | մ ³ | 76.91 | 129.440 | 9 955.230 |
| 5 | Քսվածքային ջրամեկուսացում | մ ³ | 265.2 | 1.210 | 320.892 |
| 6 | Ցանցի իրականացում ամրան Ո 25մմ A500c - 4.904 տ Անկյունակ L 100x10մմ - 6.674 տ Անկյունակ L 90x9մմ - 8.196 տ | տ | 19.774 | 884.300 | 17 486.148 |
| 7 | Հետլիցք ձեռքով | մ ³ | 35.36 | 1.713 | 60.572 |
| 8 | Ավելացված բնահողի բարձում էքսկ. 0.65մ ³ շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 3 կմ | մ ³ | 132.6 | 1.740 | 230.724 |
| IX Մայթեր | | | | | |
| 1 | Բազալտե 15x30 եզրաքարերի ապամոնտաժում և հանձնում սեփականատիրոջը | զժ.մ | 105 | 1.135 | 119.175 |
| 2 | Բազալտե 15x30 եզրաքարերի քանդում բարձում էքսկ. 0.65մ ³ շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 3 կմ | մ ³ | 4.05 | 2.165 | 8.768 |
| 3 | Բետոնյա 15x30 եզրաքարերի ապամոնտաժում և հանձնում սեփականատիրոջը | զժ.մ | 210 | 1.135 | 238.350 |
| 4 | Բետոնյա 15x30 եզրաքարերի քանդում բարձում էքսկ. 0.65մ ³ շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 3 կմ | մ ³ | 23.22 | 2.070 | 48.065 |

| | | | | | |
|---|---|----------------|---------|---------|------------|
| 5 | Բազայտե 15x30 եզրաքարերի տեղադրում բետոնյա հիմքի վրա 1գծ.մ - 0.035մ ³ (B-15) | գծ.մ | 1488.8 | 12.110 | 18 029.368 |
| 6 | Միաձույլ բետոնե եզրաշարի կառուցում 10x20 (B-20) | մ ³ | 27.8 | 69.820 | 1 940.996 |
| 7 | Ավազակոպձային հիմքի իրականացում h=12սմ | մ ² | 2020.05 | 0.653 | 1 319.093 |
| 8 | Ավազային ա/բ h=3սմ | մ ² | 2193.05 | 3.662 | 8 030.949 |
| X Բազրիքի կառուցում | | | | | |
| 1 | Բարձրիկների փոստրակի փորում ձեռքով 10eIV կարգի բնահողում, կողքի կուտակումով՝ հետլիցքի համար | մ ³ | 0.54 | 5.000 | 2.700 |
| 2 | Բետոնե բարձրիկների կառուցում B-20 միաձույլ բետոնից | մ ³ | 0.27 | 67.670 | 18.271 |
| 3 | Բազրիքների կառուցում մետաղական խողովակներից - d=40սմ - 20 մ - d=32սմ - 34.56 մ - d=48սմ - 14.52 մ - d=20սմ - 29.87 մ | տ | 0.18404 | 770.460 | 141.795 |
| 4 | Հետլիցք ձեռքով | մ ³ | 0.54 | 1.713 | 0.925 |
| XI Պատի կառուցում | | | | | |
| 1 | 10eIV կարգի բնահողի մշակում և բարձում էրսկ. 0.65մ ³ շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 3 կմ | մ ³ | 1.62 | 1.943 | 3.148 |
| 2 | Նույնը ձեռքի աշխատանքով, տեղում կուտակումով՝ հետլիցքի համար | մ ³ | 0.94 | 5.000 | 4.700 |
| 3 | Ավազակոպձային հիմքի իրականացում h=10սմ | մ ² | 0.16 | 6.590 | 1.054 |
| 4 | Հիմքի միաձույլ բետոն B-20 | մ ³ | 0.8 | 67.670 | 54.136 |
| 5 | Իրանի կառուցում B-20 | մ ³ | 1.33 | 69.820 | 92.861 |
| 6 | Բետոնի ջրամեկուսացում | մ ² | 8.72 | 1.210 | 10.551 |
| 7 | Հետլիցք ձեռքով | մ ³ | 0.94 | 1.713 | 1.610 |
| XII Կահավորում | | | | | |
| 1 | Նոր ճան. նշանների տեղադրում - Նախազգուշացնող - 4 - Առավելության - 31 - Արգելող - 2 - Հատուկ թելադրանքի - 26 - Լրացուցիչ տեղեկատվության - 4 | հատ | 67 | 32.900 | 2 204.300 |
| 2 | Ճանապարհի գծանշում - Հոծ գիծ 1.1 - Ընդհատ գիծ 1.5 (1:3) - Ընդհատ գիծ 1.6 (3:1) - Գծանշում 1.14.1 - Գծանշում 1.25 | մ ² | 263.371 | 0.912 | 240.194 |
| XIII Իջատեղ կմ0+246-ում (դեպի դպրոց) | | | | | |
| Հողային աշխատանքներ | | | | | |
| 1 | 10eIV կարգի բնահողի մշակում էրսկ. 0.65մ ³ շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 3 կմ | մ ³ | 303.56 | 1.943 | 589.817 |
| 2 | Նույնը ձեռքի աշխատանքով | մ ³ | 10.87 | 6.787 | 73.775 |
| 3 | 10eIV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ, բարձում էրսկ. 0.65մ ³ շ.տ. ա/ի տեղափոխում լցակույտ 3 կմ | մ ³ | 187 | 1.962 | 366.894 |
| 4 | 10eIV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում 20մ լիցք, հարթում, ջրում, խտացում | մ ³ | 5.42 | 0.986 | 5.344 |
| 5 | Ավազակոպձային շերտի տեղադրում h=10 սմ | մ ² | 1438.38 | 0.544 | 782.479 |

| | | | | | |
|---|---|----------------|---------|---------|-----------|
| 6 | Խճային հիմքի տեղադրում h=16 սմ բխումի 4.12տ/1000մ ² տարածումով | մ ² | 1438.38 | 3.520 | 5 063.098 |
| 7 | Մանրահատիկ ա/բ h=5 սմ | մ ² | 1438.38 | 5.570 | 8 011.777 |
| Վաքեր 50x60 սմ | | | | | |
| 1 | Ավազակոպճային շերտ h=10սմ (վաքերի տակ) | մ ² | 17.04 | 5.970 | 101.729 |
| 2 | 50x60սմ վաքերի ջրամեկուսացում | մ ² | 298.2 | 1.210 | 360.822 |
| 3 | 50x60սմ վաքերի տեղադրում (սալերով - 213 հատ) | մ ² | 30.885 | 276.675 | 8 545.107 |
| Խողովակներ d=0.273մ | | | | | |
| 1 | Ավազակոպճային շերտ h=10սմ | մ ² | 0.228 | 5.970 | 1.361 |
| 2 | Խողովակների d=0.273մ տեղադրում | զծմ | 6.4 | 24.810 | 158.784 |
| 3 | Խողովակների ջրամեկուսացում | զծմ | 6 | 1.510 | 9.060 |
| 4 | Միացման միաձույլ բետոն B-20 (վաքի և խողովակի) | մ ² | 0.04 | 112.900 | 4.516 |
| Ջրընդունիչներ | | | | | |
| 1 | 10eIV կարգի բնահողի քանդում էքս.0,65մ ² շ.տ. խրամուղու կառուցում կողքի կուտակումով | մ ² | 12.28 | 0.740 | 9.087 |
| 2 | Նույնը ձեռքի աշխատանքով | մ ² | 1.4 | 5.000 | 7.000 |
| 3 | Ավազակոպճային շերտ h=10սմ | մ ² | 1.69 | 5.970 | 10.089 |
| 4 | Միաձույլ է/բ ջրընդունիչ վաք բետոն B-20 ամրան Ո 14մմ A500c - 0.18 տ: | մ ² | 6.26 | 129.450 | 810.357 |
| 5 | Քսվածքային ջրամեկուսացում | մ ² | 21.6 | 1.210 | 26.136 |
| 6 | Ցանցի իրականացում ամրան Ո 25մմ A500c - 103.68 մ Անկյունակ L 100x10մմ - 36.0 մ Անկյունակ L 90x9մմ - 54.72 մ | տ | 1.611 | 884.000 | 1 424.124 |
| 7 | Հետյիցք ձեռքով | մ ² | 2.88 | 1.713 | 4.933 |
| 8 | Ավելացված բնահողի բարձում էքսկ. 0.65մ ² շ.տ. ա/ի և տեղափոխում լցակույտ 3 կմ | մ ² | 10.8 | 1.740 | 18.792 |
| Կանալորում | | | | | |
| 1 | Նոր ճան. նշանների տեղադրում - Նախագգուշացնող - 4 հատ - Առավելության - 1 հատ - Արգելող - 2 հատ - Լրացուցիչ տեղեկատվության - 2 հատ | հատ | 9 | 32.900 | 296.100 |
| XIV Ե/բ կամուրջի նորոգում կմ 0+213-ում (սխեման 1x9 մ, գաբարիտը 7մ) | | | | | |
| 1 | Պողպատե բազրիքների ապամոնտաժում ձեռքով և վերադարձ սեփականատիրոջը: | տ | 0.621 | 33.620 | 20.878 |
| 2 | T-1-1.5 հավաքովի մայթի բլոկների ապամոնտաժում, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա: | մ ² | 4.8 | 21.820 | 104.736 |
| 3 | Երթնեկային մասի ա/բ ծածկի կազմատում պնևմագործիքով, բարձումը ձեռքով ա/ի և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռ. վրա h=10սմ: | մ ² | 6.2 | 8.812 | 54.634 |
| 4 | Մուտքում կուտակված քարերի տեղափոխում պատգարակով մինչև 25 մ հեռ. Վրա՝ աջում սարքվող գաբիոնի համար: | տ | 3 | 0.712 | 2.136 |
| 5 | Հենարանների երկայնքով խրամուղու փորման հողային աշխատանքներ թաց ՃIVզրունտում՝ ձեռքով, կողքի զցումով, (ջրահեռացումը պոմպով, ջրի հոսքը 30մ ² /ժամ): | մ ² | 11.0 | 10.830 | 119.130 |

| | | | | | |
|----|---|----------------|--------|---------|-----------|
| 6 | Հենարանների վրա խարսխային ձողեր տեղադրելու համար անցքերի գայլիկոնում - d40մմ, L ₁ =25 սմ: | հաստ | 60 | 2.324 | 139.440 |
| 7 | Հենարանների վրա ամրանային խարխիսների տեղադրում Ս16 A500c , L ₁ =40 սմ: Էպոքսիդացված կոնկրետային շաղախ - 0.016 մ ³ : | տ | 0.038 | 835.920 | 31.765 |
| 8 | Հենարանների «շապիկների» տակ ավազակոպձային շերտի տեղադրում - h=10 սմ: | մ ³ | 0.91 | 7.170 | 6.525 |
| 9 | Հենարանների ուժեղացման «շապիկի» միաձույլ ամրանավորված բետոն B20: Խոռոչներ - 1.15 մ ³ : Ամրան - Ս10 A500c - 326.27 կգ: | մ ³ | 8.20 | 97.510 | 799.582 |
| 10 | Խրամուղիների հետախցր ձեռքով կողքի կուտակված գրունտով շերտ-շերտ ստփանումով: | մ ³ | 7.10 | 2.060 | 14.626 |
| 11 | Ռիզելների վերանորոգում (երկարացում) B20 դասի միաձույլ բետոնով: | մ ³ | 0.03 | 79.200 | 2.376 |
| 12 | Պահարանային պատեր իրականացնելու համար փոստրակի փորման հողային աշխատանքներ էքս. 0.65 մ ³ շտ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա - 10 ^{IV} : | մ ³ | 9.0 | 2.330 | 20.970 |
| 13 | Նույնը՝ ձեռքով կողքի կուտակումով: | մ ³ | 0.9 | 6.000 | 5.400 |
| 14 | Պահարանային պատերի տակ ավազակոպձային շերտ h=10 սմ: | մ ³ | 1.83 | 7.173 | 13.127 |
| 15 | Պահարանային պատերի և սալերի միջև միաշերտ ռուբերոիդ: | մ ³ | 8.10 | 2.064 | 16.718 |
| 16 | Պահարանային պատերի միաձույլ ամրանավորված B20 դասի բետոն: Ս12A500c - 216.97 կգ: | մ ³ | 9.07 | 101.600 | 921.512 |
| 17 | Հետադարձ լիցք ձեռքով կողքի կուտակված գրունտով շերտ-շերտ ստփանումով: | մ ³ | 0.9 | 2.060 | 1.854 |
| 18 | Դեֆորմացիոն կարերի վրա եռաշերտ ռուբերոիդի տեղադրում: | մ ³ | 33.30 | 5.449 | 181.452 |
| 19 | Դեֆորմացիոն կարերի ուժեղացման ամրանային ցանց: Ս8A240 - 94.14 կգ Ս14A500c - 262.33 կգ | տ | 0.3565 | 817.920 | 291.588 |
| 20 | Անվահրիչների միաձույլ հիդրոֆոր է/բետոն - B30, W8: ՍՍ6.5A240 - 5.24 կգ ՍՍ10A500c - 98.68 կգ ՍՍ12A500c - 147.61 կգ: Պողպատե խողովակներ d=76մմ, L=1.5 մ, P=0,00548տ: | մ ³ | 2.72 | 168.880 | 459.354 |
| 21 | Միաձույլ սալի (հոսքային եռանկյունի) հիդրոֆոր բետոնի իրականացում - հ _{փք} =11.5 սմ, B30, W8: Ամրանային ցանց - Bp Ø4 (100x100) - 105.8 մ ² : Ներդիր դետալներ. - 24 հաստ 10x150x200մմ, F=0,72մ ² , P=0,0576 տ; Ø14 A500c - L=24 մ, P=0,029 տ: | մ ³ | 11.86 | 158.960 | 1 885.266 |
| 22 | Ներքին շերտի մանրահատիկ ա/բետոն H=4սմ: | մ ³ | 76.7 | 4.565 | 350.136 |
| 23 | Վերին շերտի մանրահատիկ ա/բետոն H=3սմ: | մ ³ | 76.7 | 3.510 | 269.217 |
| 24 | Նոր պողպատե բազրիքների տեղադրում՝ նախնական ներկատառումով և ներկումով: Քառակուսի խողովակ 60x5, L=46.28 մ, 45x4, L=2.64 մ, 40x4, L=70.22 մ: | տ | 0.7304 | 721.657 | 527.098 |
| 25 | Մայթերի ավազային ասֆալտ հ _{փք} =3.5 | մ ² | 20.0 | 4.252 | 85.040 |
| 26 | Անվահրիչների ուղղահայաց զծանշում: | մ ² | 13.5 | 0.773 | 10.436 |
| 27 | Անվտանգության զոտիների հորիզոնական զծանշում | զմ | 20.0 | 0.055 | 1.100 |

| | | | | | |
|--|---|----------------|-------|---------|---------|
| | - հոծ: | | | | |
| 28 | Գաբիոնների համար փոստրակի փորման հողային աշխատանքներ 0.65մ ² շերտի տարողությամբ էքսկավատորով գրունտի կողքի պահեստավորումով: | մ ² | 26.5 | 0.888 | 23.532 |
| 29 | Հատակի համահարթեցման աշխատանքներ ձեռքով: | մ ² | 12 | 0.409 | 4.908 |
| 30 | Գաբիոնային շարվածք 1x1x0.5 (քար) : Հիմնակմախք d=6.5 մմ, 1գծմ=0.260 կգ, 1հատ=12.3գծմ 41 հատ 504.3/131.12 գծմ/կգ ցանցը ամրակով d=3.0 մմ, 1մ ² =1.445 կգ, 1 հատ=4 մ ² 41 հատ 164/236.98 մ ² /կգ Գաբիոններին կապող մետաղալար d=3.0մմ, 1հատ=1.2գծմ, 1 հատ=0.0665 կգ 14 հատ 16.8/1.12գծմ/կգ մետաղյա ձող d=18մմ, 1գծմ=1,998կգ, 1հատ.=1,0մ 5/10 հատ/կգ | մ ² | 20.5 | 23.180 | 475.190 |
| 31 | Գաբիոնային շարվածք 1x0.5x0.5 (քար) : Հիմնակմախք d=6.5 մմ, 1գծմ=0.260 կգ, 1հատ=9.3գծմ 10 հատ 93/24.18 գծմ/կգ ցանցը ամրակով d=3.0 մմ, 1մ ² =1.445 կգ, 1 հատ=2.5 մ ² 10 հատ 25/36.12 մ ² /կգ | մ ² | 2.5 | 26.650 | 66.625 |
| 32 | Հետադարձ լիցք 0.65մ ² շերտի տարողությամբ էքսկավատորով կողքի պահեստավորված գրունտով շերտ-շերտ տոփանումով 10 eIV: | մ ² | 9.6 | 1.580 | 15.168 |
| 33 | Նույնը ձեռքով 10 eIV: | մ ² | 1.2 | 2.060 | 2.472 |
| 34 | Ավելնորդ գրունտի բարձում 0.65մ ² շերտի տարողությամբ էքսկավատորով և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորության վրա - 10 eIV: | մ ² | 15.7 | 2.093 | 32.860 |
| XV Ե/բ կամուրջի նորոգում կմ 1+618-ում (սխեման 1x6 մ, գաբարիտը 6.2մ) | | | | | |
| 1 | Պողպատե բազրիքների ապամոնտաժում ձեռքով և վերադարձ սեփականատիրոջը: | տ | 0.414 | 33.620 | 13.919 |
| 2 | Երթնեկային մասի ա/բ ծածկի կազմատում պնևմագործիքով, բարձումը ձեռքով ա/ի և տեղափոխում լցակույտ 3 կմ հեռ. վրա h=5 սմ: | մ ² | 2.13 | 8.812 | 18.770 |
